

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

986

08
-30

Մ-32

Մատենաշար Թիւ / Փարփղի Հայ Ուս. Միութեան

Փ Բ Օ Ֆ է Ս է Օ Բ Ն. Մ Ա Ռ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՑ ԹԸ

ՆՐԱ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԵՒ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

ԸՆՍ ԼԵԶՈՒԱԳԻՑՈՒԹԵԱՆ

(Փարփղի Հայ Ուս. Միութեան կողմէ Սոսիէթէ Սավանթի
ամֆիթատրոնը կազմակերպուած երեկոյթին մէջ
կարդացած դասախոսութիւնը)



Հրատարակիչ Յ. Բ. ԹԻՒՐԱՊԵԱՆ

ՏՊԱՐԱՆ «ԱՐՁԱԳԱՆԴ ՓԱՐԻՁԻ» ի

227, Bd. Raspail

ՓԱՐԻՁ

1925

ԳԻՆ՝ 5 ՓՐ.

38
30
15

Պատենաշար Թիւ / Փարիզի Հայ Ուս. Միութեան

ՓՐՕՖԷՍԻՈՐ Ն. ՄԱ. Ռ

07 JUN 2005

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԼԿՈՅԹԸ

ՆՐԱ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԵԻ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

ԸՆՏ ԼԵԶՈՒԱԳԻՑՈՒԹԵԱՆ

(Փարիզի Հայ Ուս. Միութեան կողմէ Սոսիէթէ Սավանթի
ամփիթատրոնը կազմակերպուած երեկոյթին մէջ
կարդացած դասախոսութիւնը)




Հրատարակիչ Յ. Բ. Թիիրսպեան

ՏՊԱՐԱՆ «ԱՐՁԱԳԱՆԴ ՓԱՐԻԶԻ»Ի

227, Bd. Raspail

ՓԱ. ՐԻ. Զ

1925



Պարիղի հայ ուսանող երիտասարդութիւնը, իր նախագահի՝
Պ. Կոթիկեանի բերանով դիմել էր ինձ խնդրելով, որ մի դասա-
խոսութիւն կարբած հայոց անցեալից ինձ զբաղեցնող որ և է հարցի
վրայ: Շնորհակալիքս յայտնեցի ինձ պատիւ բերող այս հրաւերին
համար. շնորհակալ եմ նաև հանդիսականներիդ, նախօրօք ներո-
դութիւն ինդիբելով ձեր մէկ ու քառորդ ժամուան ուշադրութիւնը
չարաչար գործածելու համար:

Խոստովանում եմ, որ գրեթէ դիմումի ըստէից մտահոգութեան
մէջ էի, թէ ի՞նչպէս կատարեմ պարտականութիւնս. ել չեմ խօ-
սում լեզուի մասին. իմ դասախոսութեանց սովորական լեզուն ոռո-
սերէնը լինելուց զատ, ծագումով հայ լինելու պատիւը չունիմ. և
ունկնդիրները, հասկանալի է, ներողամտութիւն պիտի ցոյց տան օ-
տար մարդու հայերէնը լսելիս:

Սակայն մտահոգութիւնս վերաբերում էր ուրիշ բանի՝ դա-
սախոսելի նիւթի ընտրութեան, Խնդիրն այն չէ, որ ներկայումս
ինձ զբաղեցնող գիտական հարցերը համաշխարհայնութեան գոյն
և համ ունին, և Եւրոպայի, Աֆրիկէի, Ասիայի կամ Եւր-Աս-
սիայի ցալատմական կուլտուրայի լայն գիրկը խորասուզւած, տար-
ել եմ ծարդկութեան իբրեւ խօսող էութեան և մանաւանդ Եւրո-
պայի նախարարների լեզուի ուսումնասիրութեամբ:

Բանն այն է, որ հայոց կուլտուրական անցեալին ևս, մեր հա-
մոզմունքով, չէ կարելի ներկայացնել և ոչ իսկ ներելի է ուսում-
նասիրել այլապէս քան իբրև նոյն համամարդկային կուլտուրական
ամբողջութեան էական և ստեղծագործիչ այն հայոց գոյն գոյն գոյն գոյն
հայոց ազգը, որի համար ժամանակին տիրապետող ոյժերը դժուա-
րանում են ինքնուրոյն կեանքով հանգիստ ապրելու տեղ որոշել
երկրագնդի վրայ, և խնդրելի տեղը չեն գտնում, չեն տեսնում
մինչև անգամ իրանց՝ հայերի՝ բազմահազար կուլտուրայի սքան-
չելի լիշտակարաններով ծածկւած նուիրական հողը, որի վրայ
ապրող ազգը ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան մասնաւորապէս
Եւրոպայի ազգերին հետ անժխտելի կապերով ծիացած լինելով, ոչ մի-
այն պատիւ կը բերէ, այլ և նոցա կուլտուրական ծագումը և
զարգացման ձևափոխումներն ուսումնասիրելու համար ամենակա-
րեւոր ազգակ ճըն է:

Բայց ահա ցաւս — ինչպէս ժամուկէսում լուսաբանել այս-

պիսի բարդ հանգամանք հանրամատչելի կերպով, մինչ նիւթն իր ճոխութեամբ կարող է առարկայ լինել տարիներ տեսող դասընթացքի. ինչ մոգական միջոցներով հասկանալի զարձնել այդ իսկ գիտական գիտականների, ինչ մոգական միջոցներով հասկանալի զարձնել այդ իսկ գիտական գիտականների, երբ, աւաղ, տակաւին ընդհանուր լիդով, գիտական լեզու գրեթէ չեմ գտնում մինչև անդամ գիտական աշխարհում, և ինձ իմ փոքրաթիւ աշակերտներիս հետ զգում եմ կղղացած հայոց ազգի ժամանակակից բաղդի նման, անտանելի սարսափի, անտանելի մենակութեան մէջ: Այսպէս, ոչ միայն իմ անձնական գիշամութիւնս, այլ և այս հանգամանքը, պէտք էր նկատել իրեւ գրաւական, որ այսօրւայ դասախոսութիւնս յառաջուց արդէն անգրաւական, և նոյնիսկ անյաջողութեան դասապարտուած համարէր: Սակայն եթէ էլի համաձայնեւել եմ այս ինձ համար զրծուար գործը յանձն առնել, միմիայն յոյսի այն նսեմ լուսով քաջալերուած, որ եթէ մենք ընդհանուր գիտական լեզու չունինք, դոնէ ոգեւորուած ենք և մղւում ենք մի շատ թանկագին ընդհանուր բանով, կուլտուրայի և առաջադիմութեան միակ և ամենազօրեղ ոյժով սիրով դէպի մի և նոյն առարկան՝ հայոց ազգը, — դուք ձեր հայկական ծագումով, ես՝ իմ գիտական, զուտ վերացական գիտական ձգումներով:

Ոյթնք են այդ գիտական ձգումները: Դասախոսութեանս վերնագրի մէջ ասուած է «ըստ լեզուագիտութիւն»: Միթէ հայերէնի մասին լեզուագիտութիւնը այնքան յառաջիմութիւն է արել, որ նորա շնորհիւ արդէն ձեռնհաս ենք դառնում հայոց ազգի ոչ միայն քաղաքական փոխարերութիւնները, այլ և նրա կուլտուրապամ ինքնուրութան նախապատճական կապերը և մինչև իսկ արմատները երեւան հանել:

Կուլտուրայի արմատների լև նախապատճական կապերի մասին մենք, գիտնականներս էլ, նոյնգումակ գաղափար չունենք: Միջազգային իրաւումքի հարցը շօշափելով, յայտնի ոռւս հնագույն պրոֆ. Ռոստովցև արբարացի կասկածանքով է վերաբերում այն անջատման, որ շատերը տեսնում են անբաժանելի կապերով միջին դարերի և հին դասական շրջանի միջեւ. «Ժամանակակից պետականութիւնն, իրաւումքը, կրօնքը և կուլտուրան, իրանց հիմքերով անդամ են դասական աշխարհին. լուս ենք նրանից, և մեր ամբողջ ծտաւորականութիւնը, իր ամբողջ դարգացումը կատարեալ առեղծուած կը դառնար, եթէ գիտցած մի-

նէլնք, որ նրա հիմքերը ստեղծւած են դասական դարում (1)»: Երոպական մեր արդի քաղաքակալութեան արմատներն ինչու ենթագրել դասական աշխարհում և ոչ աւելի հին դարի շրջանում, լինի նա նոյն Միջերկրականում թէ Միջագետքի սահմաններում:

Մեր աշխարհայեցողութեամբ նոր շրջանների հիմքերը կամ արմատներն այսքան հեռաւոր կամ տանելու կարիք չկայ:

Նոր երեւան եկող կուլտուրական երեւոյթի հիմքերը կամ արմատները, ինչպէս և նրա ստեղծող ոգին գոնուում են իր ժամանակի միջավայրում: Իսկ կապերը, մինչև իսկ այն հիմքերի կապերը, մեզ հեռու կարող են տանել, շատ հեռու, հին և հնագոյն քաղաքակալութեած աշխարհից էլ դէն, հայցնելով մեզ նախապատճական և ցպատճական ժամանակներին, որի հասարակական ստեղծագործող տարբերը, ցեղային խաւերը, ժողովրդի զանգուածի մէջ շարունակում են պահել նոյն ստեղծագործական ոյժը և հինաւուրց լեզուների վերապատճեները:

Տիրապետող լեզուագիտական վարդապետութիւնը, կառուցանելով իր ուսումնասիրութիւնը նախ և առաջ ամենակատարեալ ֆիկտիւ լեզուների վրայ — այսպէս սասած հնդկոպական լեզուների վրայ — և ստեղծելով նրանց սքանչելի կերպով մշակուած համեմատական քերականութիւնը, գրաւուած է երել պատճական քաղաքակալական նշանակութիւն ունեցող աղգային լեզուներով, այնպէս ինչպէս նոյց զարգացումը հանդիսանում է մեռած թէ կինդանի, բայց գրականացրած, միշտ արհեստական կացութեան մէջ: Նրա, այս լեզուագիտութեան, ստեղծած ենթագրական նախակցուն վաղուց յայտնի է արդէն, երբեք դոյութիւն չի սւնեցել: Իսկ լեզուների ցեղային զարգացումն և նրանց անցուցած զանազան ստեղծագործական նախապատճական և ցպատճական շրջանները բարձի թող են արուած:

Կը կարծուի թէ այս նախապատճական շրջաններից և — աւելի ևս — պատճական ժամանակներից առաջ եղած ցեղային թէ

(1) M. J. Rastovzeff. Mejdounarodnia otnochenia i mejdounarodnoe pravo v drevnem mire (sovremenija sapiski). Parij, 1921, 4 str 129.

Նախացեղային հասարակական կեանքից լեզուի լիշտակարանները կա'ծ բնաւ չեն մնացել, կամ եթէ ճ նացել են, միայն Ամերիկայի պահանջման մեջ մնացել են, միայն Ամերիկայի Ափրիկէի այսպէս ասած վայրենի ցեղերու մէջ կարելի է համեմատ այսպէս ասած: Գալով քաղաքակրթուած աղքերին, որոնց թից չի գույն անոնց: Գալով քաղաքակրթուած աղքերին, որոնց թից չի գույն անոնց:

Կարելի չեռացնել Հայերին, բոլորը կատարեալ դարդացած լեզուների տէրեր են:

Սակայն մի բան է սպրուել զիտութեան ուշադրութիւնից: Լեզուները չեն ծագում երեք մի աղքերից, այլ բազմաթիւ աղքերուներից, նրանց խաչաձեւումից, զանազան լեզուների միացումից: Լեզուներից և ձուլումից, լեզուի ծագման և զարդացման այս օրէնքից չեն ազատել և հնդկորպական լեզուները: Ընդհակառակն հէնց չեն ազատել և հնդկորպական իրանց կատարելագործութիւնը: Այս օրէնքին են նոքա պարտական իրանց դատարկութիւնը:

Ո՞քան խաչաձեւում, այնքան մեծ կատարելագործութիւն: Խոկերը այդ խաչաձեւումն երկու raceի թէ զանազան ընտանիքի լեզուների մէջն է տեղի ունենում, ո՞քան խաչաձեւում է հանդիպում, այնքան աւելի արուեստական կատարելագործութիւն է ուտացում և նոյնքան էլ աչքի ընկնում է սկզբնատիպարներից հեռանալը, ցպատմական բնարոյս յակութիւնների կորուատը: Հեռանապէս իսկական լեզուագիտութեան համար — «ցեղասէր» եթէ չասենք «բանասէր»ի տեղ աւելի պատշաճ խօսք գործածելով — ցեղաբանական կամ էթենոլոգիկ լեզուագիտութեան համար նոքա նուազ կարեւորութիւն կը ներկայացնեն և շատ անգամ անպէտք են բայց կայ լեզուների մի առանձին խուճը, երբեմն տիեզերական ծաւալ ունեցող ընտանիք, այժմ ցիր ուցան եղած փոքրաթիւ լեզուներ, որոնք պահիւ են իրանց ընտանեկան կուսութիւնը. ճարդկային խօսքի զարդացման օրէնքի համեմատ բաղմիցս խաչաձեւութելով աղքակից լեզուների հետ, նոքա ազատ են մնացել օտար ընտանիքի լեզուների հետ ձուլելուց և իրանց մէջ կրում են և ամենաշին շրջանների առատ, տեսակ տեսակ վերապրումներ, և մինչեւ անգամ նախնական լեզուների ստեղծագործութեան աղդիւրը՝ կուսական բնազրումը:

Այս ինքնուրոյն Յարեթական կոչուած ընտանիքի, նրա ռանձնայատկութիւնների, անունի և նշանակութեան մասին որոշ գաղափար կարող է տալ ռուսերէն տպւած «Կովկաս և Երրորդ ցեղային տարրը Միջերկրեայ կուլտուրայի ստեղծման մէջ» գրքոյի այսպէս ասած:

Առանձին պատմառները ստիպեցին Յարեթական պայմանաւոր կոչումը նրանց յատկացնել: Այս ընտանիքի լեզուների վաղուց

արդէն կղզիացած գումարումը ներկայումս գտնուում է միայն Կովկասում, և նրանցից հեռու ընկած առանձնացած գոյութիւն է պահում էլի երկու լեզու, մէկը՝ Վերշիկ Պամիրի լանջերում Հինգուկուշից դէն Միջին Ասիայում, միաւը՝ Բասկերէն, Գաղղիայի և Սպանիայի մէջ: Հին ժամանակ տասնեակ դրականական լեզուների կային, հնագոյն դարերից ի վեր, մի քանիսը բևեռագիր: Նոյն Յարեթական ընտանիքին էր պատկանում նաև Ետրուակերէնը: Եթէ Յունաստանի և Փոքր Ասիայի հնագէտները քրé-hellénique կամ ցը-յունական կուլտուրական աշխարհի գոյութիւնը իրական կերպով ապացուցել են շօշափելի նիւթերէն լիշտակարաններով, և այս նախապատմական կուլտուրայի մեծ ծաւալը հաստատելուր գործում են լուսաբանել իրանց մատչելի լեզուագիտական միջոցներով և պատմական վկայութիւններով: Ինչ որ անորոշիր թէ «ասիանիկ» ընտանիքից ի թիւ որոց համարձակագոյն երեսասարդ գաղղիացի գիտնական Autran, Յարեթական լեզուագիտական մի քանի երկարածիզ դարեշրջանի է բաժանում, սկսեալ ցպատմական ժամանակներից, յարեթական ցեղի ստեղծագործական դիրն է նշանարում լեզուների նոր տեսակներն առաջ բերելու դործում, և Ափրիկէի ծովեզերքներում, ի միջի ալլոց և եղիպատերէնի և յարեթական լեզուների հնաբանութիւնը մեզ հասցնում է «ասուն» կամ «խօսուն» մարդկութեան ամենաշին ցպատմական գոյութեան հնագրեթայ (paléolithique) դարեշրջանում:

Վայրենի վերապրումներով անձատչելի դարձնելով մօտիկ ժամանակների և աղքերի պատմական իրականութիւնը շօշափել, առանց այս թէ այն գիւղագրգիռ աղքային զգացմունքին դպչելու, մեր ժամանակակից միջազգային յարաբերութիւնները ընականապէս ներշնչում են դիտնականներիս մեր որոնումները, հետազոտութիւնները տանել, մեզ հետներս քաշելով հնագոյն և հեռագոյն վայրերը, թերեւս այնտեղ մեզ էլ մերժուած հանգիստ fonyegն գտնենք, հայկական կուլտուրայի մասին զրոյց անենք, մեր կարծիքները յայտնենք ըստ լեզուագիտութեան:

Ներկայ պարագաներումս այս կարծիքներս թւում է թէ առասպել են. բայց արդեօք կեանքը, մեր կեանքը, և հայոց կեանքը նոյնպէս առասպել չէ, սարսափելի առասպել: Կուլտուրան նոյնական առասպել է. նա կեանքի հմայեցուցիչ առասպելներից ամենագեղեցիկ, ամենափայլուն տեսակն է: Եւ իմ, դիտնականիս, ինքնամանաշութիւնը բնաւ չի ընկճում, երբ յարեթագիտական

ուսումը, ճարդկութեան ամենաերեւելի և ազնիւ և գեղեցիկ առաս. պեները, Յունաց և Հրէաների աւանդութիւնները, ոչ միայն բացարում է, այլ և իբրև իրականութիւն է երեւան հանում լեզուի տուեալների միջոցով:

Բայց ի՞նչ է լեզուն: Մարդու ներքին կեանքի բացայացտումը և արդարութիւնը, ոչ միայն խօսք բանաւոր թէ գրաւոր, այլ և թէ՝ նիւթելէն և թէ՝ հասարակական մարծնացած յիշատակարաններ: Աղթամարի հանքը, քանդակագործութեան հրաշքը—ասում են, Ի.րդ դարում քանդուած Անիի ինքնավարութեան եղանակը—խասինջուութիւնը, Դումինի և Շահավիվանի ժողովները, Վարդանաց քաջագործութիւնները, Նրանց նահատակութիւնը, համաշխարհային առևտորի ծառայող ինն կամարակապ սքանչելի ճարպկութեամբ կառուցուած կամուրջները մի փոքրիկ գետի՝ Ախուրեանի վրայ, և հազար ու մէկ այլ Հայոց աղբի կամ աղքայինների ստեղծագործութիւնները Հայաստանից էլ զուրս, ի՞նչ են եթէ ոչ Հայոց լեզու, հայկական լեզու: Եւ հայերէն լեզուն, սովորական իմաստով հասկացւած լեզուն, այդ բանն էլ վկայում է: Նա էլ նախնական մարդկութեան լեզուի յատկութիւնները պահելով, մեղ ցոյց է տալիս, որ լեզուն չէ միայն խօսքերի հաւաքումն, այլ և գործերի, լեզուն՝ ինչպէս և յաբեթավիտութիւնը հասկանում է՝ լոկ բառեր չեն: Հայերէում «բան» բառը զուր չէր նշանակում և «խօսք», ի՞նչպէս յրմարէնում «լո՛գոս» կը նշանակէ միամածանակ գործկամ առակայ. և այս եղերութիւնը աշխարհաբարը պարզ ցոյց է տալիս—«ի՞նչ բան», «բանթող», «բանւորներ», և այլ ասացւածների մէջ: Արդէն այս խօսքի ծագումը յաբեթագիտութիւնը գտել է, նա նշանակում էր և՝ «խօսել», և՝ «գործել», «շինել»:

Բնականապէս Հայոց շինարարութիւնը, հայկական կուտուրան կամ մշակոյթը միեւնոյն ժամանակ և լեզուի շինարարութիւն էր, ոչ միայն հայերէնի, այլ և բոլոր այն աղքերի, որոնք նրա հետ մտերիմ շինարար յարաբերութիւններ ունեին: Ուրեմն մեր հարցը լոկ հայկական աղքային նշանակութիւն չունի: Ի հարկէ ոչ մի կուտուրա չի կարող հասկացել առանց աղգէ ցազդ աղ դեցութեան և փոխաղարձ արդիւնագործութեան, բայց հայկական կուտուրան առանձին տեղ է բռնում այս հարցում: Ազգային յարաբերութիւնների հանգոյցը կազմելով, ոչ միայն ժամանակակից ժողովուրդների մէջ այլ և մեռած կուտուրական աղքերի և ներկայ կենդանի քաղաքակրթուած աշխարհի միջև ևս հայերն առա-

շինն են եղել որ միջազգայնութեան շահերը և տիեզերական պատմութեան ըմբռնումը հասկացել են դեռ միջին դարերում: Հարցն ուրեմն մեծ է, ոչ միայն մեծ, այլ և ծանր. ձեզ, Հայերիդ համար ծանրագր' ն. բայց դուք, Հայերդ, չէք կարող ձեր պատմական դերից երես շուր տալ և միայն աղքային, անջատ թուող աղքային շահերով բաւականանալ: Ամէն մի մեծ պատմական դեր, ինչպէս ամէն մեծ ստեղծական գործ, աշխարհիս միջավայրում տառապանք է. բայց իրավէս և տառապանքից է որ ծնուռ են մեծ բաները: Հարիւր երեսուն տարի առաջ ի՞նչ տառապանք չէր կրում Սայթ-նովա: Ծանօթացէք նրա կենսագրութեան հետ: Բայց ի՞նչ գրակչէ երգեր է երգել Ապրելով Վրաստանի թագաւորական ընտանիքի շրջանում, այս հայ երգիչն երգում է և՝ հայերէն, և՝ վրացերէն, և՝ տաճկերէն, և՝ պարսկերէն լեզուներով, ստեղծում էր երգեմն միջազգային ոտանաւորներ, հայ-վրացերէն, հայ-վրացիտաճիկ-պարսկերէն, գոներով իր հայկական և ցեղային և պատմական կուտուրաախինը բնութեան մէջ ամէն ցեղի սիրտին ծօտ ներդաշնակ եղանակներ, զգացումներ, գաղափարներ և ոչ թէ միայն բառեր:

Ժէ. և Ժէ. դարերի եւրոպական պրոպագանդայի հետամուռ հայերն երկու Ճակատ պիտի կազմէին, երկուսն էլ շինարար, կուտուրական. մէկը՝ աղքային առանձնայատկութիւնները և ինքնուրոյն կուտուրան իր ստեղծագործիչ ոյմերով, քաղաքակրթութեան աղքային աւանդական տարրերով, աղքային լեզուով բարգաւաճողը: Միւաը՝ համաշխարհային նշանակութիւն ունեցող եւրոպական լուսաւորութիւնն և նրա կատարելագործած միջոցներն ներմուծանողը: Հայերը ոչ միայն առաջինն այլ և միակն են եղել արեւելեան աղքերից, որ եւրոպայի կուտուրայի իւրացման նպաստելու նպատակով գիտական հաստատութիւններ հիմնել են եւրոպայում: Յիշեցնեմ Միխթարեանների գործը, նկատելով հանդերձ, որ այն շրջանում եկեղեցին է եղել միակ աղքային շահերի մարմնացնոր հասարակական կազմակերպութիւնը: Հարիւր տարի վերջ էլի Հայերն էին կազարեան ձեմարանի հիմնադիրները:

Եւրոպայի այդ լուսաւորեալ կեղրոններում, հին թէ նոր քաղաքակրթիչ միջավայրերուն մէջ, Հայերը չեն թերացել կուտուրական կապերն ամեցնող բոյներ դնել քաղաքակրթութեան մուտքը կիւրացներու համար առաջաւոր Ասիայի մէջ: Ինչ և լինէին մերձաւոր նպատակներն, այս թէ այն կողմից այդպիսի հաստատութիւն-

Ների Հիմնադրութեան օրերին, մեր ուշադրութիւնը գրաւում է այս տեսակ զործերում հայոց ազգի միշտ երեւան եկող շինարար Հոռին, նոցա նախաձեռնութիւնն յօփուտ միջազգային կուլտուրա-կան յարաբերութեանց բարգաւաճան:

Հայերի այս միջազգային շինարար դերն ոչինչ չէ կորցնում
այն բանի համար, որ աշխարհականեր հայ ազգի ոյժերը իրանց
և կած տիրապետող խաւերի սեփականութիւն դարձուցած պետու-
թեանն էին ծառայեցնում, շնորհումակ ծողովուրդին ենթարկելով
անզուսպ բոնութեան: Դուք յիշում էք ի հարկի, ինչպէս իր աշ-
խարհի առևետրական յարաբերութիւններն բարուքելու համար եւ-
րոպայի հետ, Շահ-Աբասը՝ ամբողջ բարգաւաճ գեղեցկաշէն քա-
ղաքը քանիեց, տեղափոխելով Հայաստանից Պարսկաստան, նրա ոչ
միայն վաճառականութեան հմուտ, այլ և գեղարուեստական նուրբ
ճաշակով օժուուած բնակիչներին:

Ամայի տեղ, Արաքսի ափերում, մինչեւ մեր օրերը միայն գերեզմանոցի նախշուն քանդակուած խաչքարերն են վկայում, նոքա էլ մեծ ձասածք կամ հատ հատ միւլէներն տարուած կամ տասնեակներով ջարդ ու փշուր արուած ծօտից անցնող խճուղին և երկաթուղու կամուրջը շինելիս Խոկ ի՞նչ ասել է խաչքար հայոց ճարտարապետութեան մէջ։ Ամենազգայուն ժողովրդի բոլոր խաւերին, վերին շերտերից մինչև ստորինը, ճտերմագոյն լիշտակարանը, որի վրայ անդրադառնում է ազգային քանդակործութեան զարգացման ամէն քայլափոխ և յաճախ զուգւած երեան են գալիս հայ ճարտարապետութեան երկու հոսանքը, եկեղեցական և աշխարհական, եւ դարձեալ ի՞նչ ասել է խաչքար — հայկական գեղարուստը բացառիկ կերպով բնորոշող մի «յուշիկ հայրենեաց»։ Հայաստանի հնագոյն արձանաձեւ ճարտարապետական լիշտակարանի չորրորդ այլաձեւումը — առաջն՝ նախնագոյն Գեղաձայ սարերի վրայ գտնուած քարեայ հսկայ ձկները, Քրիստոսից չորս հինգ հաղարամեակ առաջ շինուած վիշտապները, երկրորդ՝ Վանայ թագաւորների տափակ սիւները կամ stèleները, երրորդ՝ վաղաքրիստոնէական քանդակագործ պատկերներով զարդարւած սիւները, մինչև Ժ. Րդ դարը, և յետոյ խաչքարերը։

Քաղաքացիական և տնտեսական անցքերը քշում էին տեղից տեղ, աշխարհից աշխարհ այս զարժանալի գեղարուեստորին և գրականորին օժուած և կրթիչ ցեղը, որն իր հետ սփռում էր արուեստը, գեղարուեստի ճաշակը և դպրութեան, լոյսը, թէ՛ հեռու

Հիւսիս, ԱԵՀաստանի ճեջ ոսկերչութեան արհեստի զարդացման զարկ տալով, թէ՛ հեռու հարաւ, Եթովպացլոց աշխարհի գրականութեան շարժման մասնակից դառնալով: Հայաստանի կից օտարազգի ճիշավայրերում բնակւելով, նոյն տեղերի լեզուով թարգմանում էին նոքա իրանց ճիշում, արդէն Անիի շրջանից ի վեր ուածկացրած ազգային գրականութիւնը, որ մուտք էր գործում օտարազգերի ճեջ, մատչելի դառնալով նրանց ամենաստորին զասակարգին: Հայկական ժողովրդական գիրքերը առաջններն են իրանց տեսակում, որոնք նպաստել են զանազան ազգերի ժողովրդական գրագիտ շեշտերի ճտերձացման արաբաբնակ Միջագետքից և Ասորիների կողմերից ճինչեւ կովկասեան լեռները: Հայկական գեղունի շինարարութիւնն Անիի անկումից յետոյ չեր սպառւում և բնիկ Հայաստանում, նախին աւերումներից վնասուած յիշատակարաններն էին նորոգում և նոր շքեղ եկեղեցիներ էին կառուցանում, ի պատասխան նոր հալածանքների՝ հայրենի հողի վրայ գեղարուեստի ափնուացնող նմուշներ էին տալիս իրանց բռնակալներին, ամեն ազգի մատչելի ճարտարապետական գիծերի ներդաշնակ երաժշտութեամբ:

Բայց աւելի մնայուն, թէպէտ և ազգային գնահատութիւն էլ
ուշ ստացած կուտուրական յուշիկներն եղան նոյն ճգնաժամերի
սիրոյ և տիեզերական թախծութեան բանաստեղծութիւններ, միջ-
նադարեան հայ բանաստեղծները: Որպիսի՞ պարզունակ ստեղծա-
գործութիւն ամենամոտերն նրբագոյն զգացումներով և հազարամ-
եայ վերապրում ների գառն և խորագոյն իմաստութեամբ, ի՞նչ
հձայեցուցիչ երաժիշտներ: Նրանցից մէկն ինքն խակ զարմանում
է իր խօսքի ներդաշնակութեան վրայ, և իրան այս աշխացում
ներկայացնում է իր երազներում խորասուզած ինչպէս խելագարի.
բայց արդեօք այս աշխարհում այդ տեսակ չէ բոլոր իմաստա-
սէրների վիճակը: Զպիտի զարմանանք որ Վալերի Բրիւսովի ուու-
սերէն թարգմանութիւնը ոչ միայն նպաստել է հայ ազգի գեղար-
ուեստական ճաշակը գնահատելու գործին ուուս հասարակութեան
մէջ, այլ և մտերծութեան զաղափարական հիմքն է դրել ճարդ-
կութեան ստեղծագործութեան ամենաբարձր շրջանում: Յարգելի
Զօպանեանի նոր լոյս ածած հիանալի Փրանսերէն հրատարակու-
թիւնը զարկ կտայ հայերէն բնագիրների ուսումնասալիրութեան: Սա-
կայն արդեօք մեղ հասած զրուածքներն իսկական բնագիրներ են:
Բնաւ չէ, նոքա ժողովրդական աշումներից, ժողովրդական վիպա-

սահներից ժառանգուած ցեղային հազարամեայ աւանդի շնորհն
են մեր առաջ զնում, աւա՛զ, բնաւ ոչ ամբողջութեամբ:

Մի Փրանսացի գիտնականի կարծիքով, «Սէրը կաղզում է և
երաժշտութիւնն արտայայտում է մի և նոյն սրտանց ձգուումը
դէպի անեղբն, անբաւն և անհունը, որին խօսքերը տկար են
ծարմնացներու, որին մինչեւ անգամ մտքի գիտակցութիւն չի հաս-
նում պարզ և յստակ կերպով զգալու: Երկուան էլ մեր մէջ զար-
թեցնում են այնպիսի երջանկութեան գաղափար, որ կեանքի ոչից
վեր է նրան իրականացնել և երկուան էլ մղում են մեր անձնա-
ւորութեան անցաւոր և պայմանաւոր նեղ սահմաններից ենելու,
մեր մէջ յարուցանում են խոհեր մահուան մասին:» (1)

Հայաստանում երաժշտութեան զարգացումն և բարձր համա-
րումն երեւում է նրանից էլ, որ Կիլիկիայում երգեցովութեան
ճամսագէտը փիլիսոփայի, այսինքն իմաստասէրի, իրում ունէր:
Բայց մեզ համար առանձին նշանակութիւն ունի հայկական մին-
չեւ անգամ եկեղեցական երգեցովութեան ինքնուրոյնութիւնը, որի
աղբիւրն ի զուր կը փնտուէնք հայ ազգի ցեղային ժողովրդական
աւանդութիւններից դուրս:

Սակայն երաժշտութեան կից անեղբի և անբաւի տենչանքի
ամենաուժեղ արտայայտիչն էր անխօս արուեստներից ճարտարա-
պետութիւնը, առանձին յափշտակութեամբ փայտայտած Հայաս-
տանում:

Մենք իշխում ենք Հայոց կուլտուրայի Անիական շրջանը:
Տիեզերական պատմութեան գաղափարի կանխագոյն ըմբռնոլ և ի-
րականութիւն դարձնող հայ հեղինակները զարմանալի ներդաշնա-
կութիւն են կազմում այս փոքրիկ միջնադարեան գեղեցկաշէն
քաղաքի համաշխարհային առևտուրի և ընդհանուր մարդկային
նշանակութիւն ունեցող տեղական ոճի հետ: Այս տեղ զարգա-
ցած էր և եկեղեցական և աշխարհական ճարտարապետութիւնը:
Եկեղեցական ճարտարապետութեան մէջ մի քանի հոսանք թէ
աւանդապահ թէ moderne, թէ պատկերազարդ քաղկեդոնական
և թէ զուտ քարեքանդակ հակաքալիմոնիկ: Բայց ոչ միայն այս
քրիստոնէական ճարտարապետութեան շինութիւնները, այլ և Անիի
իսլամական աղօթարանները կրում են մի ինքնուրոյնութեան դրոշ, —

(1) G. Paris. Poèmes et légendes du moyen âge.
1900, p. 179-180.

Հայկական աւելի ևս — Եիրակի յատուկ՝ տեղական: Մարդ շւա-
րած է մնում եկեղեցիների քանակութիւնից, ևս աւելի նրանից,
որ այս կրօնական շինութիւններից ոչ մէկը միւսի նման չէ, ամէն
եկեղեցի առանձին տեսակ, առանձին մարմնացած ինքնուրոյ-
ութիւն մինչեւ իսկ յատակագծի վերածական մէջ: Իսկ ինչ ա-
ռաջ շուայլ կամ թէ գիտաւորեալ համեստ քանդակագործ զարդա-
րանքների մասին: Որպիսի՛ ստեղծագործական պաղաւէտութիւն:
Ի՞նչ աղբիւրից: Օտար աշխարհներից: Այո՛, մանրամանութիւն-
ները նախընթաց շրջանից: Բայց նախընթաց դարեցանում տի-
րական էր աւատական ճարտարապետութիւնը, բոլորվին ուրիշ
աւելի վեհ ոճի ուղղութիւններ, այլ տեսակ ինքնուրութեան յայ-
տարարներ: Նոյնպէս անաղբիւր, նոյնպէս անսպառ ստեղծագոր-
ծութիւն, և այս շրջանի զանազան դարերում նորից հրապուրիչ
տարբեր ճարմնացումներ մի և նոյն աւատական ճարտարապետու-
թեան և ճարտարապետութեան ընկերակից՝ նորից բնաստեղծու-
թիւն:

Որտեղվայ է սրա ինքնուրութիւնը, ասենք — նարեկացու
ինքնուրութիւնը: Բնաւ Յոյներից չէ: Ուրեմն Ասորիների՞ց: Պար-
սիկներից, թէ Արաբներից: Բնաւ չէ:

Արաբներից գոնեա պայտածեւ կամարներն են: Երբէք: Պայ-
տածեւ կամարը Հայաստանում տիբապետում է Արաբներից առաջ:

Նարեկացին ինչպէս և առ հասարակ զուտ եկեղեցական ե-
րաժշտութիւնը, ճարտարապետութիւնը, հասարակական կաղմակեր-
պատկանը միշտ իր ինքնուրունութիւնը դրոշնակիր, ինչպէս և
պութիւնը միշտ տեղի ինքնուրունութիւնը դրոշնակիր, ինչպէս և
ոքանչելի լեզուն: Բաւ է յիշել Աստուածաշոնչի թարգմանու-
թիւնը. և քանիցս, և ի՞նչ տեսա՛կ ոճով, երկու-երեք թարգմա-
նութիւն:

Իր կարծէք թէ այս թարգմանութիւնը գոնեա ինքնուրութիւն
չէ կարող ունենալ: Ընդհակառակն: Նախկին հայկական թարգմա-
նութիւնը, որի նման մենք, եթէ բաց առնենք նրա եղայրակից
վրաց ժողովուրի թարգմանութիւնն, հայերէն բնագրից կախուած,
նոյն եղանակով կատարուած չենք պատահում բնաւ ուրիշ քրիս-
տոնէայ աղգերի օտա: Թարգմանութիւն և միեւնոյն ժամանակ հա-
րուստ գանձ հայոց ազգի հեթանոսական վերապրումների, հայ
ժողովրդական հեթանոսական անգնահատելի ասացւածքների ո-
րոնք կարգից դուրս ինքնուրութիւն են տալիս Աստուածաշոնչի
հայերէն թարգմանութեան: Ի հարկէ առաջին թարգմանիչներն,

ասորերէնից եւ յոմարէնից անկախ, թէ՛ տեքնիկական միջոցները, թէ՛ նոր հաւատքի ազգային ըմբռնուածք ժառանգում են իրանց ժողովրդական հեթանոս քուրմերից և մարդարէններից, որնք դառնուած են քրիստոնեայ քահանաներ և վարդապետներ, — այն գուրմերից և մարդարէններից, որնցից ուրիշ կուտուրական միջավայրերում «տէրվիշ» «չէլեբի»ներ և ձոգեր են ծագել իրանց յատուկ կրօնական շարժումներով և որոնք արեւմտեայ եւրոպայում մեծ պերսաղացած կելտական դրուխունների եղբայրակից երեւոյթն են ներկայացնում:

Զ.-Լ. դարուց նիւթեղէն յիշատակաբանների և բանաստեղծականների մասին խօսելով, մենք չպիտի մոռանանք այս շըջանի ամենախոշոր և ամենավերացական կրթության գործութեան ամենաերեւական կաման. խօսքս վերաբերում է առանձին կրօնքի, սեփական դաւանութեան ստեղծման գործին: Մենք կանգ չենք առնի այն բոլոր ամենանուրբ և մանրակրկիտ գիտելիքների և ճշտագոյն եղանակների վրայ որոնք անհրաժեշտ և հարկաւոր էին այս վեհագոյն շինութիւնն և' կառուցանելու և' հազար ու մէկ արտաքին և ներքին յարձակւմներից պաշտպանելու համար: Ի՞նչ իմաստափական խորասուզումն Աստուծոյ գաղափարի իւրովսանն ըմբռնման և այս նպատակին հասնելու համար նրբագոյն մտածողութեան, ի՞նչ ապշեցնող քաջագործութիւն ամենակին մտուու գաղափարների վերահասումը և խօսքերի, բաղտաւոր գիւտը: Մեզ այս բոպէիս հետաքրքրում է այն մասսայական նիւթն և նրանից ծագող ստեղծագործման դրդիչը, որոնք աշխարհի ամբողջ բնակիչներից, ընայելով իրանց ցեղական գանազանութեան, որոշ շըջանում լինում էին Հայերն կրօնի ամենաեռանդուն գործիչները: Արդիօք, այդ նիւթը և այն դրդիչ հոգին դրսից էր գալիս: Բնա՛ւ չէ: Քրիստոնեայ Ասորիներից և Քրիզանիթայից բերած նոր գաղափարները և նիւթերը պիտի յարձարուելին տեղական հեթանոսական ժառանգութեան, խորագոյն կրօնական ձգուումներին և աւանդութիւններին:

Բնական բան է, որ այն ժողովրդական անսպառ աղքիւրը Հայաստանում ազգային դաւանութիւն ստեղծողը՝ երբ տիրապետող դարձած քրիստոնէութեան հետ կորցրեց անձիջական շփումն, իր գործունէութեան հաճար լայն ասպարէզ գտաւ աւելի հաճակիր ժողովրդական խաւերում, ուր նա ստեղծեց մի շարք այսպէս ա-

սած աղանդեր և՝ Հայաստանում և՝ Հայաստանի սահմաններից դուրս: Այս առաջ աղանդաւոր վարդապետութիւններից, որոնք թանձրախիտ բուժում էին Հայկական Հողի վրայ, ընդհանուր նշանակութիւն ստացաւ Պալղիկեանութիւնը: Անցողակի յլշենք և այն, որ Մանիքեան ուսումն նախկին ձեւը, Արքունականը, Հայաստանում է ծաղկել գեռ Դրդ գարում. և մանիքեան կուլտուրայի տարածումը Միջին Ասիայում ակներեւ ազգակցութիւն է ցոյց տալիս Հայ-Վրացական եկեղեցական ասացուածների, եղբների հետ: Ձեզ յայտնի պիտի լինի, թէ ի՞նչ Հալածանքների են ենթարկել տիրապետող ազգային եկեղեցու և ազգային տիրապետող դասակարգի կողմից՝ ութերորդ գարուց մինչև մետասաններորդը՝ նոյն ժողովրդական հիմաւուրց ուսման հետեւողները Հայաստանում: Բաւական է Գրիգոր Մագիստրոսի արածները և ասածները ի նկատի ունենալ նրա և նորա գաղափարակիցների Համար այս Հայածանները գատառարտելի աղանդաւորներ էին. իսկ իրապէս նոքայուղիչ և զրգիչ, նոր ստեղծագործութեան կանչող հոգու տէրեր էին, և նոյան նախաձեռնութիւնն երեւում է և՝ Հայաստանի սահմաններից գուրս երեւան եկող կրօնական շարժումների մէջ և քրիստոնէական երրոպայում, ուր բալկաննեան թերակղզու վրայ այս աղանդաւորների աշագին բանակ էր գալթեցրած, և իսլամի բամին ղարձած Փոքր Ասիայում դէրվիշեղմի զարդացման մէջ: Հայկական ազգեցութիւնն նշանակում է ոչ ճիշճի Փոքր Ասիայի ամեջուկեան արեւետի վրայ, այլ նրանից առաջ Թիւզանդիսայի և առանձին՝ Ռուսաց հին ճարտարապետութեան վրայ, կամ ամէն դէպքում, Ռուսների հետ միեւնոյն նախապատճական շըշանից ժառանգուած անդարձուեստական ճաշակը ունեն:

Հայ պատմական կեանքի սկզբնաւորութիւնն միշտ քաղաք ներլից է, նախ ցեղական ասուածապաշտութեան տեղերից, իտոյ վաճառատեղիներից, բայց միշտ ամրոցներից։ Տոսպ-Ղան, Արձակը, Արտաշատ, Դուին, Անի։ Եւ արգեօք այսեղ մենք չեմնք կարող նոյնպէս Հայերի ժիր առևտրական և արուեստական գործունէութեածք ստեղծած քաղաքների շարքը շարունակել, անցնելով բուն հայկական հողից արտասահման։ Բայց շարքի այդ մասը թող շարունակեն թւել ինքնաբերաբար այն երախտապարտ ազգերը որոնք հայոց ազգից այս շինարար ձօնը ստանալ չեն զայցել իր ժամանակին։ Խօսքը մի կամ երկու ազգի մասին հօ՛ չէ։ Եւ միեւնոյն ժամանակ ամենասերտ շփումն բոլոր քաղաքակըրթուած ազգերի հետ, Արաբների, Պարսիկների, Ասորիների և Յոյների։ Այս անգամ զանց են առնուած առանձին պայմաններուած կատարւած կուլտուրական յարաբերութիւնները Վրացիների հետ։

Աշակին քանակութեամբ թարգմանութիւններ յունարէնից, ոչ
միայն քրիստոնէական, այլ և դասական յունարէնից:

Ծնորհիւ հայերէնի՝ քրիստոնէական դրականութեան կորած
գոհարների փրկումը: Աւելի ևս: Եւրոպայի վայրենացման դարերին
հայ ազգը իր թարգմանութիւններով յունարէնից՝ անփոխարինելի
ծառայութիւն է մատուցանում եւրոպական համամարդկային քա-
ղաքակրթութեան, ոչ միայն պահելով դասական դրականութեան
իշտառակարաններն, այլ յունագիտութեան ամենաեռանդուն ախոյ-
եան հանդիսանալով և նպաստելով այն լեզուի ուսումնասիրու-
թեան Արեւելքում և մինչեւ անգամ Յունաստանում:

Այն դարերին Եւրոպայում շատ ընկած էր քաղաքակրթու-
թիւնը: Հիմսային և կեղրոնական Խոսվայում աւելի բարձր չէր
քաղաքակրթութեան մակարդակը:

Գրիգորիոս Մեծը, պատերից ամենահոչակաւորը, որը շատ
ուժեղացրեց Հռոմի հայրապետութեան հիմքերը, բնաւ չէր իմա-
նում յունարէն, — կրթութեան գործի ստորին մակարդակի ամենա-
փայլուն ապացոյցը արևմտքում: Երկու հարիւր տարի յետոյ,
գիտնական և Ծնորհունակ Սպանիացի Cladius, Թօրինոյի ե-
պիսկոպոսը, երբ իրան չհաւանած պատկերապաշտութեան մասին
սեփական հայեցակէտ պիտի պաշտպանէր իտալական եպիսկո-
պոսների ժողովի առաջ, այդ իսկ ժողովը նա անւանեց Congre-
gatio asinorum (Էշերի ժողովակցութիւն), և պատկերապաշ-
տութիւնը պաշտպանելու համար կանչեց իրանդական միաբան
Dungal: «Երկու գիտնական հակառակորդներ» նկատում է այս
դէպքի առթիւ Գերմանացի կելտագէտ Zimmer, «այսինքն՝
Claudius սպանիացի, Dungal իրանդացի, որոնք պատահեցին
միենաց Լոմբարդի հողի վրայ, ներկայացուցիչներ են այն երկու
երկրի որոնք յոյն-ուոման (graeco-roman) կրթութեան միակ
ապաստանարան էին, է. դարու սկիզբում, երբ այս կրթութիւնն
կոխեց անկման ճանապարհ Արեւելքութում»:

Բայց ինչ որ արեւմտեան կողմից անում էին Սպանիացիք և
Իրանդացիք, նոյն բանը արեւելեան կողմից արած են Հայերը և
Հարեւան Ասորիները, այստեղ յունագիտական զրադունքները հարըս-
ացնելով մարդկային ծակոյթի թէ իրանական թէ զուտ ցեղային
կուլտուրական արրերով:

Նոքա, այս չորս ամենաթունդ յարեթադրոշմ աշխարհների
բնակիչ ազգերը, շրջապատելով Եւրոպայի հին կուլտուրական մի-
ջազայրը պահել են նրա քաղաքակրթական աւանդը և ապահովել

մարդկութեան նոր յառաջաղինութիւնը, իրանց վրայ առնելով միջ-
նադարեան խաւարացած բարբարոսութեան դաստիարակումը և նրա
քռնակալութեան ծանրութիւնը, եւ աւելի ծանրաբռնւած արե-
ւելեան ախոյեաններից՝ Ասորիները իրանց կուլտուրական միսսիայի
գոհ գնացին, անհետ եղան, Արապներ զարձած, Հայերը շարունա-
կեցին կրթիչ գերը, աղնացներով ընկճողների ցեղային տիպը ի-
րանց արինով, և բեղմնաւորելով նոցա հասարակական կեանը
իրանց շինարար ձեռքերով:

Հարեւան և մինչև անգամ հեռու ընկած աղքերից ո՞ր է, ո՞ր
օգտած չիներ հայոց ազգի կուլտուրական բարեմանութիւններից,
վիպասաններից եկող և աշուղներին հասած երգերից, նրա Ճար-
տարապետական աննման զարգացած արուեստից, նրա այն բա-
ցառիկ լեզուագիտական շնորհից, որ թարգմանչական արհեստից
աւելի արուեստ է — դիտութիւն և արուեստ միասին ձուլուած գե-
ղարութեատ է շինած, հին զարաշքաններում ստեղծած է թարգ-
մանութեան մի շարք դպրոցներ և տեսակ տեսակ ո՛չ ինքնուրոյն
գրուածքների համար պատրաստի ծոխ գրական լեզու ժառան-
գերով ժողովրդական վիպասաններից, նոր զարեշքանում երկու
գրական լեզու մշակելով կենդանի բարբառներից: Ի՞նչ աղբիւրից է
այդ ինքնուրոյնութեան ոյժն և առատ պաշարքը, ի՞նչ ցեղից,
ի՞նչ լեզուից:

★ ★

Լեզուի ուսումնասիրութիւնը երկու ճանապարհով ենք վարում
Ֆէկը՝ համեմատական է, միւսն էաբանական կամ հնէաբանա-
կան — ontologique կամ paléontologique: Բայց մեր ուսման
մէջ այս հնէաբանութիւնը կամ paléontologie ինքնուրոյն գո-
յութիւն և վաւերացման միջոցներ ունի. նա բոլորովին անկախ է
բանասիրական լեզուագիտութիւնից և նրա վրայ կերտուած հա-
մեմատական քերականութիւնից, թէ՝ պատճութիւնից, իրան պատ-
կանելի այսակէս ասած paléontologique ուսումնից, հնէաբանու-
թիւնից: Խօսք այն բանի մասին չէ, թէ յաբեթագէտը ուրիշ
գրութիւններ է առաջ բերում լեզուի ծագման կամ նրա մասերի յա-
րաբերութեան հարցը լուսաբաններիս, ուրիշ տեսակ է ապացուցա-
նում այն դրութիւնների արդարացիութիւնը: Յաբեթագէտը չէ բա-
ւականանում, օրինակ, միայն բառերի ազգակցութեամբ, թէպէտ և
ամենապարզ կերպով մարմնացրած հանդիսանայ այս ազգակցու-
թիւնն և հնէիւնաբանութեան օրէնքների համեմատ և նշանակու-
թեան կողմից, երկշեղ կամ հնէիւրոպական-յաբեթական լինելով,

դարերով և հազար տարիներով մէկ կողմից գրականութիւնն այս վերապրումների շտեմարան տածելով, միւս կողմից կենդանի բարբառները, մինչև անգամ զանազան կենդանի լեզուներ, ուրեմն անսպառ գանձարան և ստեղծող միջավայր պահելով, հայերէն լեզուն ի հարկէ ունի ամենահարուստ բառարան, գաղափարների արտայայտման անսահման ընտրութիւն:

